ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» № 539-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը հասարակական կազմակերպություններին հրավիրում է դիմելու «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով:

Դիմել կարող են այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները և խնդիրներն առնչություն ունեն պետական կազմակերպության գործունեության ոլորտի հետ և դիմելու ամսվան նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն են ծավալել տվյալ ոլորտում: Սույն պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունների դիմումների հիման վրա համակարգչային ծրագրով՝ պատահական ընտրության սկզբունքով ընտրվելու է մեկ հասարակական կազմակերպություն:

Բոլոր հետաքրքրված հասարակական կազմակերպությունները ստորագրված դիմումները կարող են ներկայացնել՝ ուղարկելով kotayk.andznakazm@mta.gov.am էլեկտրոնային հասցեին:

Դիմումի մեջ անհրաժեշտ է նշել՝

1. կազմակերպության անվանումը,
2. կազմակերպության գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն,
3. գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,
4. կազմակերպության կանոնադրությունը:

Դիմումներն ընդունվում են 2025 թվականի մարտի 13-ից ապրիլի 7-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 11:00-ից 16:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, Վարչական շենք հասցեով (☎ 0223-2-05-15, էլեկտրոնային փոստի հասցեն՝ kotayk.andznakazm@mta.gov.am):